

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

----- **Տ. Դավթյան**
10 ապրիլի 2009 թ.
N ____

----- **Գ. Խաչատրյան**
1 ապրիլի 2009 թ.
N 3

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

**2009 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ «ՀՄԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 11-Դ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածում 2008 թվականի օգոստոսի 21-ի ՀՕ-139-Ն օրենքով կատարված փոփոխության արդյունքում 2009 թվականի հունվարի 1-ից հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտման համար տուգանքների չափերը կրկնապատկվել են: Նշված օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան՝ ԱԱՀ վճարող չհամարվողների նկատմամբ տուգանքի կրկնապատկված չափերը կիրառվելու են 2010 թվականի հունվարի 1-ից:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավական ակտի մեկնաբանման և դրա վերաբերյալ պաշտոնական պարզաբանումներ տալու համար սահմանված նորմերով, **պաշտոնական պարզաբանում ենք.**

1. 2009 թվականի հունվարի 1-ից հետո հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտում արձանագրվելու դեպքում տվյալ խախտումը համարվում է առաջին, երկրորդ, երրորդ կամ հերթական թվով անգամ կատարված, եթե այդ խախտումը՝ այն արձանագրելու օրվանը նախորդող մեկ տարվա ընթացքում առաջին, երկրորդ, երրորդ կամ հերթական թվով կատարված խախտումն է, քանի որ օրենքով այլ բան սահմանված չէ:

2. 2009 թվականի ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման, հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտման արձանագրման դեպքում՝

1) եթե խախտում կատարած կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը համարվում է ԱԱՀ վճարող, ապա կատարված խախտման համար նշանակվում է տուգանք ԱԱՀ վճարողի համար սահմանված չափերով՝ առաջին խախտման համար՝ 150 հազար դրամ, 2-րդ խախտման համար՝ 300 հազար դրամ, երրորդ և ավելի խախտման համար՝ 600 հազար դրամ:

2) եթե խախտում կատարած կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը համարվում է ԱԱՀ վճարող չհամարվող, ապա կատարված խախտման համար նշանակվում է տուգանք ԱԱՀ վճարող չհամարվողի համար սահմանված չափերով՝ առաջին խախտման համար՝ 75 հազար դրամ, 2-րդ խախտման համար՝ 150 հազար դրամ, երրորդ և ավելի խախտման համար՝ 300 հազար դրամ:

3. Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման, հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտման համար տուգանքների կիրառման առումով հարկ վճարողը համարվում է ԱԱՀ վճարող՝

- եթե խախտման արձանագրման տարվանը նախորդող օրացուցային տարում հարկ վճարողի մատակարարած ապրանքների և մատուցած ծառայությունների (այդ թվում՝ անհատույց կամ մասնակի հատուցմամբ) համար օրենքին համապատասխան որոշված հարկվող շրջանառությունը գերազանցել է 58.35 մլն դրամը (ԱԱՀ-ի շեմը):

- եթե խախտման արձանագրման տարվանը նախորդող օրացուցային տարում հարկ վճարողի մատակարարած ապրանքների և մատուցած ծառայությունների (այդ թվում՝ անհատույց կամ մասնակի հատուցմամբ) օրենքին համապատասխան որոշվող հարկվող շրջանառությունը չի գերազանցել է ԱԱՀ-ի

շեմը, սակայն «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի համաձայն ԱԱՀ-ի շեմը այդ հարկ վճարողի նկատմամբ 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ կիրառելի չէ.

- եթե անձը նախորդ օրացուցային տարում չի գերազանցել ԱԱՀ-ի շեմը, սակայն խախտումն արձանագրելու հաշվետու ժամանակաշրջանին նախորդող՝ ընթացիկ տարվա հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված հաշվարկներով ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման (այդ թվում՝ անհատույց կամ մասնակի հատուցման) գործարքների հարկվող շրջանառությունը գերազանցել է ԱԱՀ-ի շեմը.

- եթե խախտումն արձանագրելու պահին հարկային մարմնում առկա տվյալներից պարզ է, որ հարկ վճարողի նկատմամբ ԱԱՀ-ի շեմը կիրառելի չէ.

- եթե խախտումն արձանագրելու պահին հարկ վճարողի կողմից արդեն իսկ ներկայացված է եղել հայտարարություն՝ իրեն ԱԱՀ վճարող համարելու մասին:

Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման, հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտման համար տուգանքների կիրառման նպատակով ԱԱՀ-ի շեմը հաշվարկվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան՝ անկախ այն հանգամանքից, թե այդ գործարքները (գործունեությունը) ինչ կարգով են հարկվել (հարկվել է ԱԱՀ-ով, պարզեցված հարկով, ԱԱՀ-ով կամ հաստատագրված վճարով):

4. 2009 թվականին բացառապես «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնողների նկատմամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտումների համար կիրառվում են ԱԱՀ վճարող չհամարվողների համար սահմանված տուգանքների չափերը:

5. Եթե հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման, հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտման արձանագրման պահին կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը համարվել է ԱԱՀ վճարող չհամարվող և հետագայում՝ խախտումն արձանագրելուց հետո ներկայացրել է հայտարարություն ԱԱՀ վճարող համարվելու մասին կամ եթե հարկ վճարողի նկատմամբ ԱԱՀ-ի շեմի կիրառելի չլինելը պարզվել է խախտումն արձանագրելու պահից հետո, ապա այս դեպքերում արձանագրված խախտման համար նշանակված տուգանքի չափի վերահաշվարկ չի կատարվում: Արձանագրված խախտման համար նշանակված տուգանքի չափի վերահաշվարկ չի կատարվում նաև, եթե կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը ԱԱՀ վճարող է համարվում հարկային մարմնի կողմից սահմանված կարգով իրականացվող ստուգումների արդյունքում: